



ԱԿԲԱ ԲԱՆԿ-ի
American Express Gold Քարտատերերին տրամադրվող ապահովագրական
ծառայությունների ընդհանուր պայմաններ

ԱԿԲԱ ԲԱՆԿ-ի American Express Gold Քարտատերերին տրամադրվող ապահովագրական ծառայությունների ընդհանուր պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) ներկայացնում են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի և հնթերնեյշնլ ՍՈՍ Ասիստանս ընկերության միջև կնքված ճանապարհորդության ապահովագրության Պայմանագրի պայմանները:

Ուժի մեջ է՝ 01.04.2022թ.-ից

CONTENT / ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Section 1 Բաժին 1	The Certificate of Insurance Ապահովագրության վկայագիր
Section 2 Բաժին 2	Meaning of Words Սահմանումներ
Section 3 Բաժին 3	Geographical Limits Աշխարհագրական սահմանափակումներ
Section 4 Բաժին 4	Eligibility Իրավասություն
Section 5 Բաժին 5	Period of Insurance Ապահովագրության գործողության ժամկետ
Section 6 Բաժին 6	Medical & Travel Assistance Services Բժշկական և ճանապարհորդական աջակցության ծառայություններ
Section 7 Բաժին 7	Emergency Medical, Evacuation and Repatriation Expense Շտապ բուժօգնության, տեղափոխման (էվակուացիայի) և հայրենադարձության (ռեպատրիացիայի) ծախսեր
Section 8 Բաժին 8	Loss of Baggage Ուղեբեռի կորուստ
Section 9 Բաժին 9	Cancellation Թռիչքի չեղարկում, բաց թողում
Section 10 Բաժին 10	Travel Inconvenience Benefits Ճանապարհորդական անհարմարավետություններից ապահովագրություն
Section 11 Բաժին 11	Lost and Stolen (Card Fraud) Կորուստ և Գողություն (Քարտի Ձեղծարարություն)
Section 12 Բաժին 12	Purchase Protection Insurance Գնումների ապահովագրություն
Section 13 Բաժին 13	General Conditions Ընդհանուր պայմաններ
Section 14 Բաժին 14	General Exclusions Applying to All Sections Բոլոր բաժիններին վերաբերող ընդհանուր բացառություններ
Section 15 Բաժին 15	Requesting Emergency and Travel Assistance Շտապ բժշկական և ճանապարհորդական աջակցություն ստանալու կարգը
Section 16 Բաժին 16	Intermediary Միջնորդ
Section 17 Բաժին 17	How to make a claim Հայտերի ներկայացման կարգը
Section 18 Բաժին 18	Complaints procedure Հայտերի կարգավորման ընթացակարգ
Appendix 1 Հավելված 1	Table of Benefits, Limits of Indemnity and Excesses Ապահովագրական ծածկույթների, հատուցման սահմանաչափերի և չհատուցվող գումարների աղյուսակ

ԲԱԺԻՆ 1. Ապահովագրության վկայագիր

- 1.1 Սույն **Ապահովագրության վկայագիրը** հանդիսանում է ապահովագրության պայմանագիր: Պայմանագիրը ներառում է յուրաքանչյուր **Քարտատիրոջը** տրամադրվող ապահովագրական ծածկույթի մանրամասները, կանոնները, պայմաններն ու բացառությունները: Բոլոր հայտերը կարգավորվում են համաձայն սույն պայմանագրի:
- 1.2 **Ապահովադիրի** կողմից վճարված ապահովագրավճարի դիմաց **Քարտատերը** իրավասու է **ապահովագրության պայմանագրի** գործողության ժամկետում և աշխարհագրական տարածքներում ստանալ հատուցում սույն պայմանագրի ներքո առաջարկվող ապահովագրական ծառայություններից՝ համաձայն պայմանագրի կանոնների, պայմանների և բացառությունների:
- 1.3 **Ապահովագրական ծածկույթը** սահմանված է «Լլոյդս»-ի ապահովագրական ընկերությունների կողմից: «Լլոյդս» ընկերությունը լիազորված է և կարգավորվում է Նախագրուշական կարգավորման մարմնի, Ֆինանսական Ծառայությունների Իրավասու Մարմնի կողմից, գրանցման համարը՝ 202761: Ֆինանսական Ծառայությունների Իրավասու Մարմինը գրանցված է Միացյալ Թագավորություն, Լոնդոն, 12 Endeavour Square, E20 1JN E14 5HS հասցեով:
- 1.4 **Ապահովագրական ծառայությունները** մատուցվում կամ կազմակերպվում են «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության կողմից: Որոշ դեպքերում, երբ «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը կազմակերպում է օժանդակության ծառայությունների մատուցումը, այդ ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է Քարտատիրոջ կողմից:
- 1.5 Սույն **Պայմանագիրը** կազմված է և կարգավորվում է ՀՀ օրենսդրության համաձայն: Սույն պայմանագրի շրջանակներում առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ բանակցությունների արդյունքում փոխադարձ համաձայնության չգալու դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 1.6 Պայմանագիրը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով: Հայերեն և անգլերեն լեզուների միջև հակասության դեպքում անգլերեն տարբերակը գերակայում է:

ԲԱԺԻՆ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Հետևյալ բառերն ու արտահայտությունները ընդգծված են մուգով և ապահովագրության **Պայմանագրի** ցանկացած բաժնում հանդիպելիս ունեն հետևյալ նշանակությունը.

SECTION 1: THE CERTIFICATE OF INSURANCE

- 1.1 This **Certificate** is a contract of insurance. This document contains the details of the cover, and the terms, conditions and exclusions relating to each **Cardholder**, and is the basis upon which all claims will be settled.
- 1.2 In consideration of payment of the premium by the **Policyholder**, the **Cardholder** is entitled to payment of **Benefits** and **Services** under this **Certificate**, during the **Period of Insurance**, within the geographical limits, subject to the terms, conditions and exclusions.
- 1.3 The **Benefits** are underwritten by certain **Underwriters** at Lloyd's. Lloyd's is authorised by the Prudential Regulation Authority (PRA) and regulated by the PRA and the Financial Conduct Authority, reference number 202761. The Financial Conduct Authority registered address is 12 Endeavour Square, London, E20 1JN, United Kingdom.
- 1.4 The **Services** are either provided or arranged by **International SOS**. In certain cases, where **International SOS** arrange assistance services, the cost of such **Services** must be borne by the **Cardholder**.
- 1.5 This Certificate is regulated in compliance with the RA legislation. All disputes arising from the Certificate, unless settled through negotiations, shall be resolved in compliance with the RA legislation.
- 1.6 This Certificate is executed in Armenian and English. In case of inconsistencies between the two texts the English version shall prevail.

SECTION 2: MEANING OF WORDS

The following words or expressions shown below appear in bold in this **Certificate** and have the following meanings wherever they appear.

Դժբախտ պատահար է համարվում ցանկացած հանկարծակի, անսպասելի, արտաքին և առանձնահատուկ իրադարձություն, որը տեղի է ունենում **Ճանապարհորդության** ընթացքում, ճանաչելի ժամանակահատվածում և տեղում, որի հետևանքով առաջանում է **մարմնական վնասվածք**:

Ահաբեկչություն է համարվում այն գործողությունը, որը ներառում, բայց չի սահմանափակվում բռնության, ուժի և/կամ խաբեության կիրառմամբ և կատարված է անձի կամ մի խումբ անձանց կողմից, որը (որոնք) գործում է (են) միայնակ, կապ ունի (ունեն) որևէ կազմակերպության կամ կառավարության հետ կամ հանդես է (են) գալիս վերջիններիս անունից՝ իրագործելով իրենց քաղաքական, կրոնական, գաղափարախոսական կամ նմանատիպ նպատակները, ներառյալ նաև կառավարության վրա ազդեցություն ունենալու և/կամ հասարակությանը կամ հասարակության որևէ հատվածին վախ ներշնչելու մտադրությունը:

Ուղեբեռ է համարվում **Քարտատիրոջը** պատկանող կամ վերջինիս պատասխանատվության ներքո գտնվող անձնական իրերը, որոնք վերցվել են **Քարտատիրոջ** կողմից ճանապարհորդության համար կամ ձեռք են բերվել **Քարտատիրոջ** կողմից ճանապարհորդության ընթացքում: Ուղեբեռի մեջ ներառվում են նաև **Թանկարժեք իրերը**:

Ապահովագրական ծածկույթ է համարվում **Ապահովագրողի** կողմից սույն **Պայմանագրի** կանոններով և պայմաններով իրականացվող ապահովագրությունը, որի շրջանակներում իրականացվում են ապահովագրական հատուցումները, ինչպես սահմանված է 7-ից 14-րդ Բաժիններում:

Մարմնական վնասվածք է համարվում ճանապարհորդության ընթացքում **Դժբախտ պատահարի** հետևանքով առաջացած ճանաչելի ֆիզիկական վնասվածքը կամ մահը:

Քարտ է համարվում Ապահովագրի քարտային ծրագրին համաձայն թողարկված քարտը, որում ներառված են սույն պայմանագրով սահմանված ապահովագրական ծածկույթը և ծառայությունները:

Քարտատեր է համարվում մինչև 76 (յոթանասունվեց) տարեկան ցանկացած անձ, ով ունի վավեր AMEX GOLD **Քարտ** (BINS: 3751251, 3751261, 3751271), որը թողարկվել է ապահովագրի կողմից, ներառյալ նաև ընտանիքի ցանկացած անդամ, ովքեր այդ անձի հետ ճանապարհորդում են իրենց համար նախատեսված տոմսով իրենց մշտական բնակության վայրից դուրս:

Accident shall mean any sudden, unexpected, external and specific event which occurs at an identifiable point in time and place during a **Journey** which results in **Bodily Injury**.

Act of Terrorism shall mean an act, including but not limited to the use of force or violence and/or threat thereof, of any person or group(s) of persons, whether acting alone or on behalf of or in connection with any organisation(s) or government(s), committed for political, religious, ideological or similar purposes or reasons including the intention to influence any government and/or to put the public, or any section of the public, in fear.

Baggage shall mean accompanied personal goods belonging to the **Cardholder** or for which the Cardholder is responsible and which are taken by the Cardholder on a **Journey** or acquired by the Cardholder during a **Journey**. Baggage shall include **Valuables**.

Benefits shall mean the benefits supplied by **Underwriters** under the terms and conditions of this **Certificate**, as set out in Sections 7 to 14 inclusive.

Bodily Injury shall mean identifiable physical injury or death, which is caused by an **Accident** during a **Journey**.

Card shall mean a card issued pursuant to the **Policyholder's** card program in which the **Benefits** and **Services** of this **Certificate** have been incorporated.

Cardholder/s shall mean any person not yet 76 (seventy six) years old who is a holder of a AMEX GOLD **Card** (BINS: 3751251, 3751261, 3751271) issued by the **Policyholder** and will include any **Family** who are all travelling with him/ her on a **Journey** from his/her Principal Country of Residence with pre-assigned ticketing.

Պայմանագիր համարվում է ապահովագրության սույն վկայագիրը:

Հայտերի կարգավորողը **Crawfords & Co**-ն է, որն իրավասու է կարգավորել հայտերը **Ապահովագրողի** անունից:

Crawford and Company-ն **Crawford and Company**-ն է, որը գտնվում է, ՌԴ, Մոսկվա, 115035, Սադովնիչեսկայա 24, 3-րդ շենք:

Հանրային փոխադրամիջոց է համարվում կանոնավոր կամ չարտերային ուղևորափոխադրման ծառայությունների մատուցման արտոնագիր ունեցող փոխադրողի կողմից շահագործվող ցանկացած հանրային ցամաքային, երկաթուղային, ջրային կամ օդային տրանսպորտային միջոց:

Տեղական հանրային փոխադրամիջոց է համարվում կանոնավոր կամ չարտերային ուղևորափոխադրման ծառայությունների մատուցման արտոնագիր ունեցող փոխադրողի կողմից շահագործվող տեղական ցանկացած հանրային ցամաքային, երկաթուղային, ջրային կամ օդային տրանսպորտային միջոց:

Պարտադիր ներառում է համարվում ապահովագրական ծածկույթի և ծառայությունների ավտոմատ տրամադրումը Քարտատերերին, որտեղ ապահովագրական ծածկույթ չի առաջարկվում ընտրանքային սկզբունքով:

Ձախողում է համարվում ցանկացած կողմի պարտավորությունների խախտումը կամ ցանկացած գործողություն, բացթողում, անփութություն, որը թույլ է տրվել կողմերից մեկի, նրա աշխատակիցների, գործակալների կամ գործընկերների կողմից, և որի արդյունքում առաջանում է մեղավոր կողմի պատասխանատվությունը մյուս կողմի առջև:

Խնամակալության տակ գտնվող երեխաներ են համարվում Քարտատիրոջ հարազատ, խորթ և իրավաբանորեն ճանաչված երեխաները, ովքեր.

1. ամուսնացած չեն և
2. ապրում են Քարտատիրոջ հետ (բացառությամբ՝ առկա ուսուցում ստանալու ընթացքում այլ տեղում բնակվողների) և
3. մինչև 19 տարեկան են (կամ մինչև 24 տարեկան՝ առկա ուսուցում ստանալու դեպքում)

Պայմանագրի գործողության սկզբնաժամկետ է համարվում 2022 թվականի ապրիլի 1-ը:

Certificate shall mean this certificate of insurance.

Claims Administrator shall mean **Crawfords & Co** who are authorised to manage claims on behalf of the **Underwriter** of the policy.

Crawford and Company shall mean Crawford and Company - Sadovnicheskaya Str., 24, bldg. 3, Moscow, Russia 115035

Common Carrier shall mean any public transport by road, rail, sea or air with a licensed carrier operating a regular and/or charter passenger service.

Domestic Common Carrier shall mean any domestic public transport by road, rail, sea or air with a licensed carrier operating a regular and/or charter passenger service.

Compulsory Inclusion shall mean the automatic provision of **Benefits** and **Services** to the **Cardholders** where the **Benefits** and **Services** are not offered on an optional basis.

Default shall mean any breach of the obligations of either **Party** or any act, omission, negligent act or statement of either **Party**, its employees, agents or sub-contractors and in respect of which liability arises from the defaulting **Party** to the other.

Dependent Children shall mean the children, step-children and legally adopted children of the **Cardholder** who are:

- i) unmarried, and;
- ii) living with such **Cardholder** (unless living elsewhere whilst in full time education), and;
- iii) under 19 years of age (or under 24 years of age if in full time education)

Effective Date shall mean 01/04/2022.

Պայմանագրի գործողության վերջնաժամկետ է համարվում 2023 թվականի մարտի 31-ը:

Ընտանիք է համարվում Քարտատիրոջ հետ ճանապարհորդող նրա ամուսինը և երեխաները:

Հարձակում է համարվում օդանավի կամ փոխադրամիջոցի կամ դրա անձնակազմի ղեկավարման անօրինական զավթումը կամ վերահսկումը:

Հիվանդություն է համարվում առողջության ցանկացած հանկարծակի և անսպասելի վատթարացումը, որն առաջին անգամ արձանագրվել է ճանապարհորդության ընթացքում, որը հաստատվում է որակավորված բժշկի կողմից և ընդունվում է «**Ինթերնեյշլ ՍՈՍ**» ընկերության բժիշկների կողմից:

«Ինթերնեյշլ ՍՈՍ» ընկերություն է համարվում Ինթերնեյշլ ՍՈՍ «Assist 24» ընկերությունը, որը գործում է ՌԴ, Մոսկվա, Դոկուկինա 16/1, 4-րդ հարկ հասցեում, փոստային ինդեքս՝ 129 226:

«Ինթերնեյշլ ՍՈՍ» ընկերության բժիշկներ են համարվում ամբողջ աշխարհում «**Ինթերնեյշլ ՍՈՍ**» ընկերության կողմից երաշխավորված բժիշկները:

Ճանապարհորդություն է համարվում մինչև 90 օր ժամկետով ուղևորությունը, որը տեղի է ունեցել ապահովագրության ժամանակահատվածում:
Ճանապարհորդությունը համարվում է սկսված, երբ **Քարտատերը** լքում է մշտական բնակության վայրը, և համարվում է ավարտված Քարտատիրոջ մշտական բնակության վայր վերադառնալուն պես:

Վերջույթի կորուստ է համարվում ձեռքի դաստակի մակարդակին կամ դրանից վերև, ինչպես նաև ոտքի կոճի մակարդակին կամ դրանից վերև ֆիզիկական բաժանման միջոցով դրա մշտական կորուստը և ներառում է ձեռքի, բազկի կամ ոտքի մշտական ամբողջական և անվերականգնելի կորուստը:

Բժշկական ծախսեր են համարվում բոլոր ողջամիտ և անհրաժեշտաբար կատարված ծախսերը, որոնք առաջացել են **Քարտատիրոջ հիմնական բնակության երկրից** դուրս՝ հիվանդանոցային, վիրաբուժական, դիագնոստիկ կամ այլ բուժումների իրականացման համար, որը ցուցվել կամ նշանակվել է որակավորված բժիշկ-մասնագետի կողմից:

Դրամ է համարվում մետաղադրամները, թղթադրամները, փոստային դրամական փոխանցումների բլանկերը, ստորագրված ճանապարհորդային և այլ չեկերը, ակրեդիտիվները,

Expiry Date shall mean 31/03/2023.

Family shall mean the **Spouse** and **Dependent Children** of the holder of the **Card** travelling with the Cardholder on a Journey.

Hi-jack shall mean the unlawful seizure or wrongful exercise of control of an aircraft or conveyance, or the crew thereof.

Illness shall mean any sudden and unexpected deterioration of health, that first manifests during a **Journey** and which is certified by a qualified medical practitioner and agreed by an **International SOS Physician**.

International SOS means **International SOS** "Assist 24", 16/1 Dokukina str., 4th floor, Postal Code: 129 226, Moscow, Russia

International SOS Physician shall mean the physicians nominated by the **International SOS** assistance centres throughout the world.

Journey shall mean the first 90 days of any trip incepting within the Period of Reinsurance, The **Journey** shall be deemed to have begun with the **Cardholder's** departure from the home where such **Cardholder** normally resides and shall have ended upon return to that home.

Loss of Limb shall mean permanent loss by physical separation of a hand at or above the wrist or of a foot at or above the ankle and includes permanent total and irrecoverable loss of use of hand, arm, foot or leg.

Medical Expenses shall mean all reasonable costs necessarily incurred outside the **Cardholder's Principal Country of Residence** for hospital, surgical or other diagnostic or remedial treatment given or prescribed by a qualified medical practitioner.

Money shall mean coins, bank notes, postal and Money orders, signed travellers and other cheques, letters of credit, travel tickets, credit cards, petrol coupons and

ճանապարհորդական տոմսերը, վճարային քարտերը, բենզինի և այլ չեկերը:

Կողմ է համարվում ապահովագրության պայմանագրի յուրաքանչյուր կողմը:

Մշտական ամբողջական անաշխատունակություն

Այն դեպքում, երբ Քարտատերն աշխատում է վճարովի հիմունքներով, մշտական ամբողջական անաշխատունակություն է համարվում բժշկական հիմքերով հաստատված անաշխատունակությունը, որի պատճառով Քարտատերը չի կարող զբաղվել շահույթ ստանալու նպատակ հետապնդող որևէ տեսակի գործունեությամբ առնվազն 12 (տասներկու) ամիս և ամենայն հավանականությամբ չի կարողանալու զբաղվել շահույթ ստանալու նպատակ հետապնդող որևէ տեսակի գործունեությամբ իր մնացած կյանքի ընթացքում:

Այն դեպքում, երբ Քարտատերն աշխատում է անվճար հիմունքներով, մշտական ամբողջական անաշխատունակություն է համարվում բժշկական հիմքերով հաստատված անաշխատունակությունը, որը տևում է 12 (տասներկու) ամիս, որի պատճառով Քարտատերը ամենայն հավանականությամբ չի կարողանալու զբաղվել շահույթ ստանալու նպատակ հետապնդող որևէ տեսակի գործունեությամբ իր մնացած կյանքի ընթացքում:

Ապահովագրության ժամկետը ապահովագրության պայմանագրի գործողության սկզբնաժամկետի և վերջնաժամկետի միջև ընկած ժամանակահատվածն է:

Ապահովագիծը ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ-ն է:

Նախապես առկա առողջական վիճակի վատթարացում

է համարվում ցանկացած հիվանդություն, արատ, ֆիզիկական թուլություն կամ այլ վիճակ ներառյալ վատթարացումները կամ բարդացումները, որոնք միջազգային «**Ինթերնեյշնլ ՍՈՍ**» ընկերության բժշկական խորհրդատուի կարծիքով կարող են պատճառահետևանքային կապ ունենալ **Ճանապարհորդությունից** առաջ տրամադրված բուժօգնության, խորհրդի կամ բժշկական հետազոտության հետ կամ որի համար **Քարտատերը** ճանապարհորդությունից առաջ ստանում է կամ ստացել է բուժում, բժշկի, ատամնաբույժի, հիրոպրակտիկի, ֆիզիոթերապևտի կամ նատուրոպատի խորհրդատվություն կամ հետազոտություն: Սա ներառում է խրոնիկ կամ շարունակական բժշկական կամ ատամնաբուժական վիճակը, որոնց վերաբերյալ Քարտատերը տեղյակ է եղել, կամ կարող էր տեղյակ լինել և որը հանգեցրել է ապահովագրական պատահարի սույն պայմանագրի շրջանակներում:

other coupons.

Party shall mean a party to this contract of insurance.

Permanent Total Disablement

Where the Cardholder is gainfully employed

Shall mean disablement which medical evidence confirms, will prevent the **Cardholder** from engaging in any gainful occupation for at least 12 (twelve) months and will in all probability entirely prevent the **Cardholder** from engaging in any gainful occupation whatsoever for the remainder of his/her life.

Where the Cardholder is not gainfully employed

Shall mean disablement which lasts for 12 (twelve) months and which medical evidence confirms will in all probability entirely prevent the **Cardholder** from engaging in any and every occupation whatsoever for the remainder of his/her life.

Period of Insurance shall mean the period between the **Effective Date** and the **Expiry Date**.

Policyholder shall means ACBA Bank.

Pre-existing Health Disorder or Condition shall mean any **Illness**, defect, physical infirmity or condition, including sequela or complications thereof that in the opinion of a qualified medical practitioner appointed by **International SOS** can reasonably be related thereto or for which the **Cardholder** is receiving or has received medical treatment, advice or investigation prior to the **Journey** or for which the **Cardholder** is receiving or has received medical treatment, advice or investigation from a doctor, dentist, chiropractor, physiotherapist or naturopath prior to the **Journey**. This includes chronic or ongoing medical or dental conditions which **You** were aware of, or of which **You** could expect to be aware of that may lead to a claim under this **Certificate**.

Հիմնական բնակության երկիր է համարվում այն երկիրը, որտեղ **Քարտատերն** ունի իր հիմնական բնակության վայրը: Սույն ապահովագրության իրականացման ժամանակ Քարտատիրոջ անմիջական ընտանիքի քաղաքացիությամբ որոշվում է Քարտատիրոջ քաղաքացիությունը: Երկքաղաքացիության դեպքում Քարտատիրոջ քաղաքացիությունը որոշվում է հիմք ընդունելով իր հիմնական բնակության երկրի քաղաքացիությունը սույն ապահովագրության իրականացման ընթացքում:

Ազգական է համարվում Քարտատիրոջ ամուսինը կամ կինը, զուգընկերը, մայրը, սկեսուրը կամ զոքանչը, հայրը, սկեսրայրը, դուստրը, հարսը, որդին, փեսան (ներառյալ օրինական որդեգրված դուստրը և որդին), ամուսնու եղբայրը, եղբայրը, քույրը, ամուսնու քույրը, պապիկը, տատիկը, թոռնիկը, նշանածը:

Ծանր բժշկական իրավիճակ է համարվում իրավիճակը, որը միջազգային «**Ինթերնեյշնլ ՍՈՍ**» ընկերության բժշկի կարծիքով պահանջում է շտապ բուժօգնություն Քարտատիրոջ մահից կամ վերջինիս առողջությանը սպառնացող լուրջ վտանգներից խուսափելու համար: Նման պայմանի գոյության որոշման հարցում «**Ինթերնեյշնլ ՍՈՍ**» ընկերության բժիշկը կարող է հաշվի առնել Քարտատիրոջ գտնվելու աշխարհագրական վայրը, բժշկական շտապ օգնության էությունը և համապատասխան բժշկական խնամքի միջոցների տեղական հասանելիությունը:

Ծառայություններ են համարվում 24-ժամյա աջակցության և այլ շտապ օգնության հետ կապված ծառայությունները, որոնք տրամադրվում են «**Ինթերնեյշնլ ՍՈՍ**» ընկերության կողմից ինչպես նկարագրված է Պայմանագրի Բաժին 6-ում:

Ամուսին համարվում է **Քարտատիրոջ** օրինական ամուսինը կամ, եթե Քարտատերը ամուսնացած չէ, Քարտատիրոջ զուգընկերը, որը **Ճանապարհորդությունից** առաջ առնվազն 1 (մեկ) տարի Քարտատիրոջ հետ միասին ապրում է նույն հասցեում:

Ապահովագրական գործակալ/Մենք, Մեր, Մեզ են համարվում Լոնդոնի Լլոյդսի ապահովագրական գործակալները:

Արժեքավոր իրեր են համարվում զարդերը, ոսկին, արծաթը, թանկարժեք մետաղները կամ թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարե իրերը, ժամացույցները, մորթեղենը, աուդիո, վիդեո, համակարգչային, հեռուստատեսային և հեռահաղորդակցական սարքավորումները (ներառյալ կոմպակտ սկավառակները, թվային վիդեո սկավառակները, ժապավենները, ֆիլմերը, ձայներիզները, քարթիջները,

Principal Country of Residence shall mean that country in which the **Cardholders** has his/her principal place of residence. Immediate **Family** assumes the nationality of the **Cardholder** for the purposes of this insurance. In the event of dual nationality, the **Cardholder** assumes the nationality of their **Principal Country of Residence** for the purposes and for the duration of this insurance.

Relative shall mean spouse or common law partner, mother, mother-in-law, father, father-in-law, daughter, daughter-in-law, son, son-in-law, (including legally adopted daughter or son), brother, brother-in-law, sister, sister-in-law, grandfather, grandmother, grandson, granddaughter or fiancé (e) of a **Cardholder**.

Serious Medical Condition shall mean a condition, which in the opinion of an **International SOS Physician** requires emergency medical treatment to avoid death or serious impairment to the **Cardholder's** health. In determining whether such a condition exists, the **International SOS Physician** may consider the **Cardholder's** geographical location, the nature of the medical emergency and the local availability of appropriate medical care or facilities.

Services shall mean the 24-hour assistance and other related emergency services to be provided by **International SOS** as described in section 6 of this **Certificate**.

Spouse shall mean either the **Cardholder's** legal wife/husband or, if the **Cardholder** is not married, the **Cardholder's** common law partner who has cohabited with the **Cardholder** at the same address for a continuous period of at least 1(one) year prior to the **Journey**.

Underwriters/ We/ Us shall mean certain **Underwriters** at Lloyd's, London.

Valuables shall mean jewellery, gold, silver, precious metal or precious or semiprecious stone articles, watches, furs, audio, video, computer, television and telecommunications equipment (including Compact Discs, Digital Video Discs, tapes, films, cassettes, cartridges, batteries and headphones), computer games, handheld consoles/computers and games,

մարտկոցները, ականջակալները), համակարգչային խաղերը, դյուրակիր համակարգիչները և խաղերը, iPods/MP3/MP4 նվագարկիչներ և դրանց հետ կապված սարքավորումները, աստղադիտակը, երկդիտակը, սպորտային/ակտիվ ապրելակերպի սարքերը, սարքավորումները (բացառությամբ ձմեռային սպորտային սարքավորումների) և լուսանկարչական սարքերը:

Դուք-ը համարվում է Քարտապանը:

Ապահովագրված գնում է համարվում իրը, որը գնվել է Քարտատիրոջ կողմից, և որի համար վճարվել է Գործող քարտային հաշվից: Որպեսզի գնումը համարվի ապահովագրված, գնման ողջ գումարը պետք է ամբողջովին վճարված լինի Գործող քարտային հաշվից:

Պատշաճ ջանասիրություն է համարվում բոլոր սթափ գործողությունների, ուշադրության և խնամքի իրականացումը, որը կատարվում է ողջամիտ և հաշվենկատ անձի կողմից միևնույն հանգամանքներում ապահովագրված գնումները կորստից, գողությունից և վնասումից պաշտպանելու և պահպանելու համար:

Գործող քարտային հաշիվ է համարվում Ապահովագրական ծածկույթով սահմանված քարտային հաշիվը:

Չեղծարարություն է համարվում պատահարը, որում քարտապանի ծածկույթով նախատեսված գործարքին վերաբերվող գնման առարկան, ոչ ստացվում է Քարտապանի կողմից, և ոչ էլ առարկան համապատասխանում է ինտերնետային համացանցում դրա նկարագրությանը:

Հատուցման սահմանաչափ է համարվում այն առավելագույն գումարը, որի սահմաններում Ապահովագրողը սույն ապահովագրության վկայագրով սահմանված դրույթների և պայմանների համաձայն պատասխանատվություն է կրում ըստ յուրաքանչյուր Քարտատիրոջ և յուրաքանչյուր պատահարի:

Կիբեռ հարձակում համարվում է ցանկացած անձի կամ անձանց կողմից անօրինական մուտքը էլեկտրոնային առևտրի կայք:

Խորհրդավոր անհետացում է համարվում գնված ապրանքի անբացատրելի եղանակով անհետացումը, երբ որևէ իրական փաստի կամ անձի կողմից կատարված սխալի առկայություն չկա:

Պատահար է համարվում յուրաքանչյուր դեպք, որը սույն Պայմանագրի համաձայն Պատահար է առաջ բերում:

iPods/MP3/MP4 players and associated equipment, telescopes, binoculars, sports/activity equipment (excluding winter sports equipment) and photographic equipment only.

You shall mean the **Cardholder**.

Covered Purchase means an item purchased by the Cardholder and paid for by using an Eligible Account. For a purchase to be considered a Covered Purchase, the entire purchase amount for the item must have been made through the Eligible Account.

Due Diligence means the performance of all vigilant activity, attentiveness and care that would be taken by a reasonable and prudent person in the same or similar circumstances in order to guard and protect a Covered Purchase from loss, theft or damage.

Eligible Account means the Account(s) described in the Schedule(s) of Benefits.

Fraud shall mean an Occurrence in which merchandise relating to a Covered Transaction of the Cardholder is neither received by the Cardholder nor does the merchandise fit the description displayed on the internet.

Limit of Indemnity refers to the maximum amount of third party expenses for which the Underwriters shall be responsible under this Policy towards any one Cardholder during any one event, subject to the terms and conditions as defined hereunder.

Hacking shall mean the unauthorised entry to an E-commerce site by any person or persons.

Mysterious Disappearance means the vanishing of a purchased item in an unexplained manner where there is an absence of evidence of a wrongful act by a person or persons.

Occurrence shall mean each event giving rise to a loss hereon.

PIN կող է համարվում Քարտատիրոջ անձնական նույնականացման համարը, որը օգտագործվում է Քարտով գործարքները վավերացնելու համար:

Գողացված է համարվում Ապահովագրված գնման անհետացումը կամ կորուստը, որը կատարվել է հայտնի վայրից և այնպիսի հանգամանքների առկայությամբ, որոնք ենթադրում են գողության հավանականություն:

Կիբեռ գեղծարարություն նշանակում է էլեկտրոնային Առևտրի կայքում պահպանվող տվյալների չարտոնագրված մանիպուլյացիա, ջնջում կամ աղավաղում:

Ապահովադիր է համարվում Ապահովագրողի հետ պայմանագիր կնքող կողմը, որը հանդես է գալիս Քարտատիրոջ անունից:

ԲԱԺԻՆ 3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

3.1 Սույն Պայմանագրով տրամադրվող Ապահովագրական ծածկույթը գործում է ամբողջ աշխարհում, իսկ Ճանապարհորդության հետ կապ ունեցող ապահովագրական ծառայությունները՝ արտասահմանում գտնվելիս, բացառությամբ Ուղեբեռի կորստի ապահովագրական ծածկույթի, որը նույնպես գործում է ամբողջ աշխարհում:

ԲԱԺԻՆ 4. ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

4.1 Սույն ապահովագրությամբ տրամադրվող ծածկույթից և/կամ ծառայություններից իրավունք ունեն օգտվելու միայն այն Քարտատերերը, ովքեր Պայմանագրի ուժի մեջ մտնելու կամ վերականգնման պահին մինչև 76 (յոթանասունվեց) տարեկան են:

4.2 Քարտատերը իրավունք ունի օգտվելու ապահովագրական ծածկույթից և/կամ ծառայություններից՝ համաձայն սույն Պայմանագրի պայմանների կամ ցանկացած այլ չափանիշների, որոնք սահմանվել են Ապահովագրողի կողմից և ամրագրվել ապահովագրական և/կամ «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունների հետ կնքված պայմանագրերում:

4.3 Քարտատիրոջը տրամադրվող ապահովագրական ծածկույթը և ծառայությունները գործում են Պարտադիր ներառման սկզբունքով:

PIN means the Cardholder's Personal Identification Number that is used to validate a Card transaction.

Stolen means a loss which involves the disappearance of a Covered Purchase from a known place under the circumstances that would indicate the probability of theft.

Tampering shall mean the unauthorised manipulation, deletion, distortion or addition of data stored on an Ecommerce site.

Policyholder means the Party contracting with Underwriters on behalf of Cardholders.

SECTION 3: GEOGRAPHICAL LIMITS

3.1 The **Services** and **Benefits** described in this **Certificate** are provided on a worldwide basis. Travel-related insurance services are provided on outside of country of residence basis, excluding Loss of Baggage Coverage, which is also provided on a worldwide basis.

SECTION 4: ELIGIBILITY

4.1 Only those **Cardholders** who are not yet 76 (seventy six) years old on the **Effective Date** or renewal date shall be eligible for **Benefits** and/or **Services** under this insurance.

4.2 The **Cardholder** is eligible for the **Benefits** and/or **Services** in accordance with the terms and conditions of this **Certificate** or any other eligibility criteria set by the **Policyholder** in writing with the prior agreement from **Underwriters** and/or **International SOS**.

4.3 The **Benefits** and **Services** provided to the **Cardholders** shall be on a **Compulsory Inclusion** basis.

ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Ապահովագրական պայմանագրի գործողության սկզբնաժամկետից և գործում է մինչև Ապահովագրական պայմանագրի գործողության վերջնաժամկետը:

5.2 Ցանկացած կողմ կարող է անմիջապես դադարեցնել Պայմանագիրը՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով մյուս կողմին հետևյալ դեպքերում՝

1. մյուս կողմը խախտել է Պայմանագրով սահմանված պահանջներից որևէ մեկը և վերջինիս չի հաջողվել վերացնել խախտումը նման խախտման վերաբերյալ գրավոր ծանուցում ստանալուց 30 (երեսուն) օրվա ընթացքում, կամ

2. մյուս կողմի հավաստիացումներն ու երաշխավորությունները տալու պահին դրանք սխալ կամ կեղծ են եղել, կամ

3. մյուս կողմին առաջադրանք է ներկայացվել հօգուտ պարտատերերի կամ ընդունվել է որոշում կամ ներկայացվել է միջնորդություն մյուս կողմի լուծարման, գործունեության դադարեցման համար կամ նշանակվել է լուծարային կառավարիչ, ընդունող կողմ, լիազորված սեփականատեր, դատական կառավարիչ կամ նմանատիպ ծառայող նրա ամբողջ ակտիվների կամ դրանց հիմնական մասի գծով, կամ բռնագանձում կամ այլ տեսակի գործողություն է իրականացվում նրա ակտիվների դեմ:

5.3 Պայմանագրի ժամկետի ավարտի կամ դադարեցման դեպքում երկու կողմերն էլ ազատվում են բոլոր հետագա պարտավորություններից Պայմանագրի ժամկետի ավարտման կամ դադարեցման օրվանից:

5.4 Բոլոր Քարտատերերը իրավունք են ստանում օգտվելու ապահովագրական ծածկույթից և ծառայություններից իրենց քարտային հաշվի ակտիվացման պահից կամ այն պահից, երբ Քարտատիրոջ մասին տեղեկացվում է ապահովագրական ընկերությանը՝ վերջինիս վճարվող համապատասխան ապահովագրավճարների վճարման դեպքում:

5.5 Ապահովագրական ծածկույթից և ծառայություններից օգտվելու իրավունքը ավտոմատ դադարեցվում է այն ժամանակ, երբ ապահովագրական ընկերությունը ստանում է գրավոր ծանուցում Քարտատիրոջ հեռացման կամ Քարտատիրոջ AMEX Gold Card հաշվի փակման մասին, անկախ այն փաստից, թե նշված

SECTION 5: PERIOD OF INSURANCE

5.1 This **Certificate** shall commence on the **Effective Date** and shall be in force until the **Expiry Date**.

5.2 Any **Party** may immediately terminate this **Certificate** on written notice to the other **Party** in the event that:

(i) the other **Party** shall be in Default of the performance or observance of any material covenants or provisions hereof and such **Party** shall have failed to remedy such default or breach within 30 (thirty) days after receiving written notice of such default or breach; or

(ii) any material representation or warranty made by the other **Party** is false or untrue when made; or

(iii) the other **Party** shall make a general assignment for the benefit of creditors or a resolution is passed or a petition is presented against the other **Party** for liquidation, winding-up or dissolution or for the appointment of a liquidator, receiver, trustee, judicial manager or similar official of all or a substantial part of its assets or if execution or any form of action is levied or taken against any of its assets.

5.3 In the event of termination or expiry of this **Certificate**, both **Parties** shall be relieved of all future liabilities as at the date of termination or **Expiry Date**, whichever is applicable.

5.4 All **Cardholders** are entitled to the **Benefits** and **Services** from the date of activation of their **Card** account or the date the **Cardholder** has been notified to **Underwriters**, whichever comes later and subject to the appropriate premium having been paid to **Underwriters**.

5.5 The entitlement to **Benefits** and **Services** will cease automatically on the date **Underwriters** receive written notification of the deletion of the **Cardholder** or the termination of the **Cardholder's** AMEX Gold card account or the termination of the AMEX Gold card account, whichever comes first.

5.6 A **Cardholder's** eligibility for the **Benefits** and

հանգամանքներից որն առաջինը տեղի կունենա:

5.6 Ապահովագրական ծածկույթից և ծառայություններից օգտվելու Քարտատիրոջ իրավունքը դադարում է ստորև նշված հանգամանքներից ցանկացածն ի հայտ գալու դեպքում`

1. Սույն Պայմանագրի համաձայն` Քարտատերն այլևս իրավունք չունի օգտվելու ապահովագրական ծածկույթից և ծառայություններից
2. Սույն պայմանագրի գործողության ժամկետը դադարելու կամ ավարտվելու օրվանից` անկախ այն փաստից, թե նշված հանգամանքներից որը առաջինը տեղի կունենա:

ԲԱԺԻՆ 6. ԲԺՇԿԱԿԱՆ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1 Աջակցության ծառայություններ
 «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը տրամադրում է տարբեր բժշկական և ճանապարհորդական աջակցության ծառայություններ: «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության կողմից տրամադրվող այդ ծառայությունները սահմանված են սույն Պայմանագրով ապահովագրավճարները վճարված լինելու պայմանով: Այն դեպքերում, երբ նման ծառայությունների տրամադրման համար ներգրավվում է որևէ երրորդ կողմ, ինչպես օրինակ` սուրհանդակ կամ բժիշկ, այդ լրացուցիչ ծախսերը հոգում է Քարտատերը` բացառությամբ Պայմանագրով սահմանված դեպքերի:

6.2 «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերություն

6.2.1 Հեռախոսային աջակցություն
 «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության հետ հեռախոսով կապ հաստատելու դեպքում Քարտատիրոջը կտրամադրվի բժշկական խորհրդատվություն` ներառյալ ճանապարհորդության համար պահանջվող պատվաստումների վերաբերյալ տեղեկատվությունը: «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը նաև կտրամադրի տեղեկատվություն ճանապարհորդական վիզաների վերաբերյալ: Պետք է նկատի ունենալ, որ ցանկացած նման խորհուրդ անխուսափելիորեն սահմանափակ է` կախված որոշակի հանգամանքներից և «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը չի կարող կրել պատասխանատվություն սխալների համար:

6.2.2 Ուղղորդում դեպի Ծառայություն մատուցողները

Services shall cease on the earliest of:

- (i) the date the **Cardholder** as shown is no longer eligible for the **Benefits** and **Services** pursuant to this **Certificate**; or
- (ii) the Date of Termination or **Expiry Date**, whichever occurs first.

SECTION 6: MEDICAL AND TRAVEL ASSISTANCE SERVICES

6.1 Assistance **Services**

International SOS will provide various medical and travel assistance **Services** to the **Cardholder**. Those **Services** provided directly by **International SOS** are covered under the terms of this **Certificate**, subject to the Premium having been paid. Where a third party, such as a physician or courier, is utilised the provision of such **Services** is at the expense of the **Cardholder**, unless such costs are covered under the terms of this **Certificate**.

6.2 **International SOS Services**

6.2.1 Telephone assistance.

If contacted **International SOS** will provide medical advice to the **Cardholder** by telephone, including information on inoculation requirements for travel. **International SOS** will also provide information on travel visas. It must be noted that any such advice is inevitably limited by the circumstances and **International SOS** cannot be held liable for errors

6.2.2 Service Provider referral

«Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության հետ հեռախոսով կապ հաստատելու դեպքում Քարտատիրոջը կտրամադրվի բժշկական և իրավաբանական ծառայություններ մատուցողների, ներառյալ բժիշկների, ատամնաբույժների, իրավաբանների, իրավախորհրդատուների, թարգմանիչների, հիվանդանոցների և այլ համապատասխան անձանց և հաստատությունների կոնտակտային տվյալներ: Այսպիսի դեպքերում «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը ցուցաբերում է առանձնահատուկ զգուշություն և ուշադրություն ծառայություններ մատուցողների ընտրության հարցում, որից հետո միայն տրամադրում անհրաժեշտ խորհուրդ և պատասխանատվություն չի կրում տրամադրված խորհուրդների և վերջիններիս արդյունքում առաջ եկած հետևանքների համար: Ընդ որում, եթե անհրաժեշտ ծառայություն մատուցող երրորդ կողմի ծախսերը չեն հատուցվում սույն Պայմանագրով, դրանց վճարումը կատարվում է Քարտատիրոջ կողմից:

6.2.3 Բժշկական մոնիտորինգ

Քարտատիրոջ հոսպիտալացման դեպքում «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը անհրաժեշտության դեպքում կվերահսկի Քարտատիրոջ բուժման գործընթացը հոսպիտալացման ընթացքում և դրանից հետո՝ մինչև վերջինիս առողջական վիճակի վերականգնումը՝ գաղտնիության և համապատասխան թույլտվության յուրաքանչյուր և բոլոր պարտավորությունների համաձայն:

6.2.4 Քարտատերերի աջակցություն

Այն դեպքերում, երբ Քարտատերերը կապ են հաստատում «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության հետ՝ կորցրած կամ գողացված Քարտի մասին տեղեկացնելու կամ հաշիվների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով, «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը հնարավորինս շուտ կապ է հաստատում Ապահովագրողի Քարտատերերի սպասարկման կենտրոնի հետ:

6.2.5 Վճարման երաշխավորություն

Պայմանագրով սահմանված դեպքերում «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը կերաշխավորի կամ կվճարի ցանկացած հոսպիտալացման դեպոզիտային վճար Քարտատիրոջ անունից:

6.3 Երրորդ կողմի Ծառայություններ.

6.3.1 Շտապ բուժօգնության անհրաժեշտության դեպքում, երբ հեռախոսով հնարավոր չէ համարժեքորեն գնահատել Քարտատիրոջ վիճակը հնարավոր տեղափոխման համար, կամ Քարտատերը չի կարող տեղաշարժվել և

If contacted, **International SOS** will provide to the **Cardholder** contact details for medical or legal service providers, including physicians, dentists, lawyers, legal practitioners, interpreters, hospitals and other relevant persons or institutions. In such cases, whilst **International SOS** exercises care and diligence in selecting the providers, does not provide the actual advice and is not responsible for the advice given or the outcome thereof. Further, unless the cost of the provision of the actual **Services** by third parties are covered by this **Certificate**, they must be borne separately by the **Cardholder**.

6.2.3 Medical Monitoring

In the event of a **Cardholder** requiring hospitalisation, **International SOS** will, if required, monitor the **Cardholder's** medical condition during and after hospitalisation until the beneficiary regains a normal state of health, subject to any and all obligations in respect of confidentiality and relevant authorisation.

6.2.4 **Cardholder** support

In the event that **International SOS** is contacted to report a lost or stolen **Card** or for account queries, **International SOS** shall contact the **Policyholder's** customers service line as soon as practicable.

6.2.5 Guarantee of Payment

If covered under the terms of this **Certificate**, **International SOS** will guarantee or pay any required hospital admittance deposit on behalf of a **Cardholder**.

6.3 Third Party Services.

6.3.1 In the event of an emergency where, either the **Cardholder** cannot be adequately assessed by telephone for possible evacuation, or the **Cardholder** cannot be moved and local medical treatment is unavailable, **International SOS** will,

տեղական բուժօգնության ցուցաբերումը հնարավոր չէ, «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը Քարտատիրոջ մոտ է ուղարկում համապատասխան որակավորում ունեցող բժիշկ: «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության կողմից չի վճարվում այս ծառայության համար՝ բացառությամբ Պայմանագրով սահմանված դեպքերի:

6.3.2 «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը կազմակերպում է Քարտատիրոջ բուժօգնության կամ խնամքի համար անհրաժեշտ դեղորայքի, բժշկական պարագաների և սարքավորումների մատակարարումը Քարտատիրոջը, եթե դրանք հասանելի չեն Քարտատիրոջ գտնվելու վայրում: Նման դեղորայքների և բժշկական սարքավորումների մատակարարումը պետք է համապատասխանի տվյալ տեղանքի օրենսդրությանը և կարգավորվի դրանով: «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը չի վճարում նման դեղորայքների և բժշկական սարքավորումների, ինչպես նաև դրանց մատակարարման ծախսերը՝ բացառությամբ Պայմանագրով սահմանված դեպքերի:

ԲԱԺԻՆ 7. ՇՏԱՊ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ, ՏԵՂԱՓՈԽՄԱՆ (ԷՎԱԿՈՒԱՑԻԱՅԻ) ԵՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ (ՌԵՊԱՏՐԻԱՑԻԱՅԻ) ԾԱԽՍԵՐ

7.1 Բժշկական Ծախսեր
Եթե ճանապարհորդության ընթացքում Քարտատերը կրում է Բժշկական ծախսեր, որոնք ուղղակի հետևանք են հանդիսանում Քարտատիրոջ առկա Մարմնական վնասվածքի կամ որևէ հիվանդության (ներառյալ COVID-19), ապա Ապահովագրական ընկերությունը հատուցում է Քարտատիրոջ կրած ծախսերը՝ Հավելված 1-ում սահմանված առավելագույն սահմանաչափի շրջանակներում:

7.2 Շտապ տեղափոխում (էվակուացիա) և հայրենադարձություն (ռեպատրիացիա)

7.2.1 Այն դեպքում, երբ Քարտատերը տառապում է որևէ հիվանդությամբ, դառնում է Պատահարի տուժող կողմ կամ ստանում է Մարմնական վնասվածք ճանապարհորդության ընթացքում և գտնվում է Ծանր բժշկական իրավիճակում և «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության կարծիքով անհրաժեշտ է բժշկական միջամտություն, «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը կազմակերպում է Քարտատիրոջ տեղափոխումը համապատասխան բժշկական օգնություն տրամադրող մոտակա հիվանդանոց

send an appropriately qualified medical practitioner to the **Cardholder**. **International SOS** will not pay for the costs of such **Services** unless covered under the terms of this **Certificate**.

6.3.2 **International SOS** will arrange to have delivered to the **Cardholder** essential medicine, drugs, medical supplies or medical equipment that are necessary for a **Cardholder's** care and/or treatment but which are not available at the **Cardholder's** location. The delivery of such medicine, drugs and medical supplies will be subject to the laws and regulations applicable locally. **International SOS** will not pay for the costs of such medicine, drugs or medical supplies and any delivery costs thereof unless covered under the terms of this **Certificate**.

SECTION 7: EMERGENCY MEDICAL, EVACUATION AND REPATRIATION EXPENSES

7.1 Medical Expenses

If a **Cardholder** incurs **Medical Expenses** whilst on a **Journey** as the direct result of the **Cardholder** sustaining **Bodily Injury** or suffering an **Illness** (including COVID-19), the **Underwriters** will make a payment to the **Cardholder** in respect of such expenses up to the limit shown in Appendix 1 of this **Certificate**.

7.2 Emergency Evacuation and Repatriation Expenses

7.2.1 In the event that a **Cardholder** sustains **Bodily Injury** or suffers an **Illness** whilst on a **Journey**, and the **Cardholder** is in a **Serious Medical Condition**, and in the opinion of **International SOS** such arrangements are necessary on medical grounds, **International SOS** will arrange for the transportation for moving the **Cardholder** to the nearest hospital where appropriate medical care is available or **International SOS** will arrange for the repatriation of the **Cardholder** to the

<p>կամ Քարտատիրոջ վերադարձը վերջինիս Հիմնական բնակության երկիր:</p>	<p>Principal Country of Residence.</p>
<p>7.2.2 Անհրաժեշտության դեպքում «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը կազմակերպում է նաև համապատասխան հաղորդակցման և լինգվիստիկ, շարժական բժշկական սարքավորումների և բժշկական ուղեկցորդի ծառայությունների տրամադրումը:</p>	<p>7.2.2 If required, International SOS will also arrange for the provision of appropriate communication and linguistic capabilities, mobile medical equipment and a medical escort.</p>
<p>7.2.3 «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը իրավունք ունի միակողմանիորեն որոշել, թե արդյոք Քարտատիրոջ բժշկական վիճակը բավարար չափով ծանր է շտապ բժշկական տեղափոխում իրականացնելու համար: «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը լիիրավ իրավունք ունի միակողմանիորեն որոշել Քարտատիրոջ տեղափոխման վայրը, ինչպես նաև փոխադրման միջոցները՝ հաշվի առնելով բոլոր առկա փաստերը և հանգամանքները, որոնց մասին «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը տեղյակ է տվյալ պահին:</p>	<p>7.2.3 International SOS reserves the right to decide whether the Cardholder's medical condition is sufficiently serious to warrant an emergency medical evacuation. International SOS further reserves the right to decide the place to which the Cardholder shall be evacuated to and the means or method by which such evacuation will be carried out having taken into account all the assessed facts and circumstances of which International SOS is aware at the relevant time.</p>
<p>7.2.4 «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունն իրավունք ունի միակողմանիորեն որոշել Քարտատիրոջը հայրենադարձության նպատակով կիրառվող փոխադրման միջոցները՝ հաշվի առնելով բոլոր առկա փաստերը և հանգամանքները, որոնց մասին «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը տեղյակ է տվյալ պահին:</p>	<p>7.2.4 International SOS reserves the right to decide the means or method by which such repatriation will be carried out having taken into account all the assessed facts and circumstances of which International SOS is aware at the relevant time.</p>
<p>7.3 Աճյունի տեղափոխություն Հիմնական բնակության վայրից դուրս Ճանապարհորդության ընթացքում Քարտատիրոջ մահվան դեպքում «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը կազմակերպում է Քարտատիրոջ աճյունի տեղափոխությունը մահվան վայրից նրա օրինական անձնական ներկայացուցչի կողմից նշված ցանկացած խելամիտ վայր:</p>	<p>7.3 Transportation of Mortal Remains In the case of death of a Cardholder whilst on a Journey outside the Principal Country of Residence, International SOS will arrange for transporting the Cardholder's mortal remains from the place of death to any location as may be reasonably selected by the Cardholder's legal personal representative.</p>
<p>7.4 Քարտատիրոջն այցելության ծախսեր</p>	<p>7.4 Transportation to join a Cardholder</p>
<p>7.4.1 «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը տրամադրում է էկոնոմ կարգի մեկ երկկողմ տոմս Քարտատիրոջ կողմից ընտրված անձին, իրեն այցելելու համար, երբ Քարտատերը հոսպիտալացվել է կամ հոսպիտալացվելու է Հիմնական բնակության երկրից դուրս Մարմնական վնասվածքի կամ հիվանդության պատճառով՝ բացառությամբ հոսպիտալացման առաջին 7 (յոթ) շարունակական օրերի: Նման այցելության անհրաժեշտությունը որոշվում է «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության կողմից բժշկական և կարեկցանքի հիմունքներով և ենթակա է «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության նախօրոք հաստատմանը:</p>	<p>7.4.1 International SOS will arrange an economy class return ticket for a person chosen by the Cardholder to join the Cardholder who has been or will be hospitalised outside the Principal Country of Residence as a result of Bodily Injury or Illness for a period in excess of 7 (seven) consecutive days, subject to International SOS' prior approval and only when judged necessary by International SOS on medical and compassionate grounds.</p>
<p>7.5 Խնամակալության տակ գտնվող Երեխաների վերադարձ</p>	<p>7.5 Return of Dependent Children</p>
<p>7.5.1 Եթե Ճանապարհորդության ընթացքում Քարտատիրոջ հետ տեղի ունեցած Պատահարի</p>	<p>7.5.1 If Dependent Children are left unattended as a</p>

կամ հիվանդության արդյունքում վերջինիս երեխաները մնացել են առանց խնամքի, «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը կազմակերպում է Խնամակալության տակ գտնվող երեխաների վերադարձը վերջիններիս մշտական բնակության վայր Հասարակական տրանսպորտային փոխադրամիջոցի օգնությամբ: «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության հայեցողությամբ կարող են տրամադրվել մասնագիտացված ուղեկցորդներ:

ԲԱԺԻՆ 7-ի հատուկ բացառություններ

7.6 Ի լրումն հիմնական բացառությունների, հետևյալ բուժումները, կետերը, պայմանները, գործողությունները և դրանց առնչվող կամ դրանցից բխող ծախսերը չեն ներառվում սույն բաժնով նախատեսված ծածկույթի մեջ՝

1. ծախսեր, որոնք առաջանում են Պատահարի տեղի ունենալուց, Հիվանդության առաջին դրսևորումից 12 (տասներկու) ամիս հետո,
2. ատամնաբուժական ծախսերը, եթե դրանք չեն առաջացել Պատահարի, Հիվանդության կամ Մարմնական վնասվածքի ստացման արդյունքում,
3. օպտիկական ծախսեր, եթե հիվանդության կամ մարմնական վնասվածքի արդյունք չէ,
4. ծախսեր, որոնք առաջացել են որակավորում չունեցող բժշկի կողմից իրականացված բուժման արդյունքում,
5. ծախսեր, որոնք առաջացել են Հիմնական բնակության երկրում,
6. ոչ բժշկական բնույթի ծախսեր, ինչպես օրինակ բայց չսահմանափակվելով հեռախոսային զանգեր, թերթեր, ինտերնետային վճարներ և այլն,
7. ծառայություններ, որոնք մատուցվել են առանց «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության հաստատման կամ միջամտության,
8. ծախսեր, որոնք միևնույն է կկատարվեին, եթե «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության միջամտությունը պահանջող դեպքը տեղի չունենար,
9. կամավոր կոսմետիկ վիրահատության ծախսեր,
10. բուժման համար կատարված ծախսեր, որոնք չեն հաստատվում բժշկական եզրակացությամբ,
11. բուժման ծախսեր, որոնք «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության բժշկի կարծիքով անհրաժեշտ չեն բժշկական տեսանկյունից և կարող են բուժվել Քարտատիրոջ Հիմնական բնակության երկիր վերադարձից հետո,

result of a **Cardholder's Bodily Injury** or **Illness** whilst on a **Journey**, **International SOS** will arrange the transportation for such **Dependent Children** by **Common Carrier** to their normal place of residence. Qualified attendants will be provided when deemed appropriate by **International SOS**.

Specific Exclusions Applying to SECTION 7

7.6 In addition to the General Exclusions, the following treatment, items, conditions, activities and their related or consequential expenses are specifically excluded from the cover provided by this section:

- (i) Expenses incurred after 12 (twelve) months from the date of the **Accident** or first manifestation of **Illness**;
- (ii) Dental expenses unless incurred as a result of an **Illness** or **Bodily Injury**;
- (iii) Optical expenses, unless incurred as a result of an **Illness** or **Bodily Injury**;
- (iv) Treatment provided other than by a qualified medical practitioner;
